ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2026 թվականի N 62 - Ա

«ՔԱՐԱՇԵՆԻ ԼԵՐՄԵՆՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԻ ԼԱԼԱԲԵԿՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 6-ի N 16 պայմանագրի 2.1.1. կետի 22-րդ ենթակետը, «Քարաշենի Լերմենտ Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 60-րդ կետը և նույն կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ն. Գրիգորյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2026 թվականի փետրվարի 16-ից լուծել «Քարաշենի Լերմենտ Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող (այսուհետ՝ Համակարգող) Նորայր Գրիգորյանի հետ 2024 թվականի օգոստոսի 6-ին կնքված N 16 աշխատանքային պայմանագիրը:

2. «Քարաշենի Լերմենտ Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության Համակարգողի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Նաիրի Լալաբեկյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2026-02-13 11:00:07 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. փետրվարի 13
ք. Կապան